

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

II.

ՀԻՆ ԱՇԽԱՐՀԻ ՍՏՐԿՈՒԹԻՒՆԸ ՔՐԻՍՏՈՍԻ ԾՆՆԴԻՑ ԱՌԱՋ.

Ա.

Ստրկութեան ազդեցութիւնը հռովմէական կայսերութեան տնտեսական և ընկերական կազմութեան վերայ:

Այս գլխի Բովանդակութիւնը: Ժամանակակից հասարակութեանց տնտեսական պայմանները բոլորովին հակապատկեր են Հին աշխարհի տնտեսական կեանքին: — Հին հասարակութեանց ոչ-բնական տնտեսական կազմակերպութիւնը կախուած էր գլխաւորապէս նրանից, որ նոցա մէջ գլխաւոր դասակարգերն էին տէրէրն և ստրուկները, միայն ստրուկներն էին կազմում արդիւնաբերող և մշակող դասը. մինչդեռ ամեն ազատ մարդ չունէր հնար ոչ աշխատելու և ոչ առևտուր անելու: Հին աշխարհում ստրկաց թիւը յոյժ մեծ էր. կարելի է ասել, որ Հին հարուստներն ունէին ստրուկների զօրաբանակներ: — Հարստի տունը կենդրոն էր բազմադան արհեստանոցների և գործարանների: Այն գործարանների արդիւնաբերութիւնը ոչ միայն հարուստների տների պիտոյքներն են հայթայթում, այլ և ուրիշներին վաճառուում են աժան գնով: —

Գործարանների զանազան արդիւնաբերութեանց պաշարներն, որոնցով լիքն էին հարստների նկուղներն ու մառանները, անհնարին էին անուժ առուտուրը հրապարակներում: — Շատ հարուստներ կանգնում են գործարաններ, ուր աշխատում են նոցա ստրուկներն և առժան գնով վաճառելով գործարանների արտադրութիւններն, ազատ աշխատանքին խոչընդոտ են լինում: — Ստրուկների ապրուստի արժանութիւնը: — Նախազգուշութեան միջոցներ

ստրուկների ծուլութեան և փախուստի դէմ, օրէնքով թոյլատրած խիստ պատիժները թէ մէկի և թէ միւսի դէմ: — Ստրուկն անձն չէ համարուում, այլ իր, շարժական սեպհականութիւն ձեռագործական հաստատութեան:— Հին աշխարհում կային ընկերութիւնք, որոնք վարձու տալիս էին ամեն տեսակ արուեստների հմուտ ըստրուկներ, սկսած տան ծառայից մինչև բժիշկներ: Կրասսոս և Նորա մշակող արուեստաւոր ստրուկների ընկերութիւնք: — Հռովմում և նահանգներում գտանվում են ստրուկներ, որոնք պարապում են գանազան արուեստներով և գործերով յօգուտ իրանց տէրերի: — Պլեբէյները (ազատ ժողովրդականք) չունին հնար պարապելու արուեստներով և առուտրով: — Ստրուկները փոխարինում են նրանց ամենուրեք, մինչև իսկ պաշտօններ են ստանում տաճարներում, պետական վարչական և ելեմտական հաստատութեանց մէջ: — Նրանց (Պլեբէյներին) մնում է պարապել անբարոյական ստորացուցիչ գործերով և կամ դառնալ հարուստների հացկատակ և պատառաբոյծ: — Այստեղից Պլեբէյների դա սակարգի մէջ զարգացումն ամուրիութեան և որդեսպանութեան: — Պետութիւնն և հարուստները Պլեբէյներին բաժանում են ձրի հաց, պաշար, դրամ և պարգևներ: — Պաւառներն այս ընթացքում հետևում են Հռովմի օրինակին: — Սրա հետևանքն է անգործութեան զարգացումն և ամբոխի բարոյական անկումն: — Ստրուկութեան միւս տիպը կոչման — ձեռագործութեան և երկրագործութեան անկումն: — Մրցումն զարգացնում է ձեռագործութիւնը, իսկ Հին աշխարհում գոյութիւն ունէր միայն ձեռագործական մենավաճառութիւնը: — Քաջակերութիւն գտնում են միայն այնպիսի արհեստներն և ճարտարութիւնք, որոնք ծառայում են շուայլութեան — սրանից կատարեալ դադարումն և բացակայութիւն կատարելագործութեան ճարտարութեանց և օգտաւէտ արհեստների մէջ: — Հարուստների տներում, որոնք լի են ճոխ ձեռագործներով, բոլոր աշխատանքները կատարուում են նախնական եղանակներով: — Մեքենաների հնարումն օգուտ չէ տէրերին և ստրուկներին: — Մեծամեծաց տներում բազմաթիւ ստրուկներ նշանակած էին ամենաչնչին ծառայութեանց և աշխատանաց համար: — Կլիմէնտ Ա-

ղեքսանդրացու թողած նկարագրութիւնը հարուստ Հռովմայեցւոյ տան: — Երկրագործութեան վերայ էլ երեւում է ստրկութեան լուրջ զօրութիւնը: Նա ոչինչացնում է ազատ երկրագործական աշխատանքն և Հին աշխարհի հողը ուժասպառ է անում: — Բազմաթիւ ստրուկներ ունեցող հարուստների ձգտումն ամեն անարդար ձախապարհներով գնելու անչափ ընդարձակ գետիններ: Սուրբ Գրիգոր Նազիանզացու և Ամբրոսիոս Մեդիոլանացու ճառերը հարուստներին յափշտակութեանց դէմ: — Յափշտակած գետիններում բնակում են ստրուկներն և ստրկական աշխատանքը աքսորում է ազատի վաստակը: — Ստրուկները տակաւ առ տակաւ փոխարինում են ազատ կառավարիչներին և վարձկան մշակներին: — Վերջինները մինչև անգամ բռնութեամբ ստրուկ են դարձնում: — Տէրերն ամենեւին չեն այցելում իրանց կալուածքները և ստրուկ կառավարիչները յափշտակում են տնտեսական արդիւնքները, իսկ ստրկի աշխատանքն այնպէս ուժասպառ է անում հողին, որ երկրագործութեան արդիւնքը չէ ծածկում երկրագործ ստրուկների ապրուստի ծախքը: — Իտալիայի մշակելի գետինների մեծ մասը տէրերը դարձնում են արօթատեղիք, որոնց վերայ թափառում են բազմաթիւ հօտեր, որոց հովիւները շուտով դառնում են աւազակներ: — Կայսրների ձեռք առած միջոցներն այս չարեաց առաջն առնելու համար, ինչպէս զորքերինակ Տրայանոսի ժամանակ գետինների ձրի բաժանումն կամ խոնի մշակումն հողերի Գոմիտիանոսի ժամանակ արդիւնաւոր հետեանք չեն ունենում: — Գաւառները նոյնպէս աղքատանում են և թափուր լինում բնակիչներից: Բարբարոսներին բնակեցնելը դարձապէս գետինների վերայ օգուտ չէ բերում:

Որպէս զի վարստանք հասկանալ բոլոր վնասն, որ ստրկութիւնից ունեցաւ Հին աշխարհը, պէտք է մանրամասնօրէն ծանօթանալ հռովմէական աշխարհի տնտեսական և ընկերական կազմակերպութեան, որոյ վերայ ստրկութիւնը աշխարհայ կերպով դրեց իւր ծանր մահաբեր կնիքը: Աշխատանքի ազատութիւնն և ամենքի համար հարստութեան դիւրամատչելիութիւնը հասարակութեանց բարօ-

թուլթեան էական գրաւականներն են: Ուր աշխատանքն և շահըստացութիւնն անբնական և ծանր պայմանների մէջ են գտնուում, պետութեան բոլոր տնտեսական կեանքը ծիւրւում է և տակաւ առ տակաւ ցամաքում են Հասարակական բարօրութեան բոլոր աղբիւրները: Այն Հասարակութեան մէջ ուր աշխատանքն ազատ է, ինչպէս կենդանի մարմնոյ մէջ շրջանառութիւն են գործում առողջ նիւթերը, նոյնպէս և նորա (Հասարակութեան) մէջ աղբերաբար բղխում է կեանքը, այնտեղ Հասարակութեան անդամները իրանց ունեցածները փոխանակում են — մէկն իւր աշխատանքը, միւսը Հարստութիւնը: Հասարակութեան մի մասն աշխատում է պահպանելու կամ բազմացնելու իւր ձեռք բերածը, միւսն աշխատում է, որպէս զի կարողանայ սեպհականութեան տէր դառնալ: Այս սկզբունքների Հիման վերայ կանոնաւորապէս կազմակերպուած Հասարակութեան մէջ մի դասակարգը պահպանում է միւսին և ոչ թէ միմեանց վերայ բռնանում են և միմեանց ճնշում, որովհետեւ մի դասակարգի բարօրութիւնը սերտ կախումն ունի միւսի բարօրութիւնից: Այսպիսի Հասարակութեան մէջ Հարստութիւնը անփոփոխ կերպով չէ մնում մի և նոյն անձանց ձեռքում, ինչպէս և աղբատնիրան չէ գտնում անփոփոխելի անուղղելի վիճակի մէջ, եթէ միայն նա առողջ է, եթէ միայն նա կարող է և գիտէ աշխատել: Այսպիսի է ժամանակակից Հասարակութեանց տնտեսական վիճակն իւր էական մասերով, մենք նրան այլապէս մեզ չենք էլ կարող ներկայացնել կամ երեւակայել:

Հին աշխարհն իւր մի քանի շրջաններում ներկայացնում էր օրինակ այնպիսի Հասարակութեան, որ կազմակերպուած էր բոլորովին Հակառակ սկզբունքների Հիման վերայ:

Քրիստոնէական թուականի նախընթաց շրջանում Հռովմէական Հասարակութիւնը բաղկացած էր երկու բոլորովին տարբեր դասակարգերից — տէրերից և ստրուկներից: Առաջիններինն էին եւ Հարստութիւնն եւ իշխանութիւնն եւ պատիւները, երկրորդները, շատ քիչ բացառութեամբ, երբէք և ոչ իսկ երազել կարող էին վերոյիշեալների մասին:

Ստրուկներն աշխատում չէին վարձի Համար, նոքա տալիս էին

տէրերին իրանց աշխատանքը ձրի. նոքա վաստակում էին ուրիշների և ոչ իրանց գործանքների համար. նրանց գնում էին, կերակրում էին, բայց երբէք չէին վարձատրում աշխատանքի համար: Նոքա մշակութեան գործիքներ էին, մշակութեան գործիքներ մարդկային ձայնով—*instrumenti genus vocale*, ինչպէս անուանում է նրանց Վարդը:

Հոովմէական հասարակութեան մէջ, իրաւ, կար եւ երկրորդ տարրը, երբէմն զօրեղ, բայց քրիստոնէութեան ծագման մօտիկ ժամանակներն արդէն կորցրած էր իւր քաղաքական—տնտեսական և հասարակական նշանակութիւնն—այս էր այն մարդոց դասակարգն, որ ոչինչ չուներ, ոչինչ չէր արդիւնաբերում և ապրում կամ հարուստների և կամ պետութեան հաշուով—այս էր հասարակ ժողովուրդը—ամբոխը ժամանակակից բառով. իսկ Հոովմէական իրաւաբանական բարբառով ստոր, գրեթէ անարգ — *humiles, tenuissimi*:

Նոքա գրեթէ անկարող էին աշխատելու, ի շնորհս բազմութեան ստրկաց, ի շնորհս ստրկաց աշխատանքի արժանութեան, բայց ժողովրդեան այս դասակարգը յոյժ բազմաթիւ էր—նա կազմում էր Հոովմի բնակչաց գրեթէ չորրորդ մասը:

Այսպէս ամբողջ Հոովմէական հասարակութիւնը բաղկացած էր այնպիսի մարդկերանցից, որոնք ձրի աշխատում էին ուրիշների համար, այնպիսի մարդիկներից, որոնք անկարող էին աշխատանքով իրանց ապրուստը հոգալ և վերջապէս այնպիսի մարդոց դասակարգից, որ ապրում էր ուրիշների հաշուով, անցնելով իւր ժամանակը պարապովութեան մէջ: Մեր մշակ—արհեստաւորը, որ բաւականաչափ ոյժ ունի և ճարտարութիւն, կարող է իրան հարուստ համարել, գոնէ նա տէր է իւր ապագային, եթէ նա աշխատասէր, չափաւոր—չարեքցող է, և շուայլ մարդ չէ, նա իւր ընտանեօք հանդերձ միշտ կուշտ կլինի:

Հոովմէական հայերէնութեան մէջ ազատ աշխատակիցի համար ոչ ուրիշ չկար: Հարուստ մարդիկ ունենալով բազմաթիւ գերիներ ոչ միայն իրանք ապրում էին և հարստանում նոքա աշխատանքով, այլ և ամէն ինչ գնում էին, կրկնավաճառութեամբ վաստակում, իրանց ձեռքն էին առնում բոլոր գործարանական ձեռագործու-

Թիւնքն և մինչև իսկ առուտուրը, առանց բացառութեան և ման-
բազմառութեան:

Հոովմն այն վիճակի հասաւ, որ նորա բնակիչներէց նոքա, որոնք
հարստութիւն չունէին կամ ստրուկ չէին, պէտք է ապրէին ի հաշիւ
պետութեան, առանց գործ կատարելու:

Հին աշխարհի ստրկի և ժամանակակից ծառայի մէջ բնաւ նմա-
նութիւն չկայ, որովհետև ժամանակակից ծառայն իւր պարտին
վաճառում է իւր ծառայութիւնը դրամական վարձատրութեամբ,
անձնապէս ինքն ազատ լինելով, Հին ստրուկը պատկանում էր իւր
տիրոջ և ամենեւին ոռճիկ առնելու իրաւունք չունէր: Սրանից ծա-
ղում էր ստրուկների բազմաթիւ լինելը Հոովմէական կայսերու-
թեան մէջ, համեմատելով տէրերի թուի հետ:

Թէ Հոովմում և թէ գաւառական քաղաքներում երեք ստրուկ
ունենալը մեծ աղքատութեան նշան էր: Ով մի ստրուկ ունէր, ոչ
միայն կայսերութեան առաջին դարերում, այլ և Յովհաննէս Ոսկե-
բերանի ժամանակ մուրացկան էր համարուում: Հոովմայեցին, որ
ունէր ժառանգական կալուածք երկու կամ երեք հազար ըուբլու
արծողութեամբ, սովորաբար եօթը կամ ութը ստրուկների տէր
պիտի լինէր: Երբ Ովրատիոսը նստում էր իւր համեստ ճաշը վայե-
լելու, նորան միշտ ծառայում էին երեք ստրուկներ, բացի սրանից
նա իւր փոքրիկ սարքնական կալուածքում ունէր ինն ստրուկ:

Ապուլէոսն իւր «Ջատագովութիւն» երկասիրութեան մէջ պատ-
մում է, որ իւր կինն, որ ունէր կալուածք ու դրամագլուխ 800,000
Փրանկի արծողութեամբ, կտակեց իւր զաւակներին իւր հողային
կալուածոց մի մասն և 40) ստրուկ: Առհասարակ ստրուկների
թիւը համեմատ էր լինում նոցա տիրոջ հարստութեան, այնպէս որ
600 ըուբլի գումարի վերայ մի ստրուկ էր գալիս: Սրանից կարելի է
եզրակացնել, թէ որքան մեծ էր ստրուկների թիւն այն հարուստ
Հոովմայեցիների, որոնք ընդարձակ կալուածքների տէր էին:

Պլինէոսը պատմում է, որ մի աղատութիւն ստացած գերի Օգոս-
տոսի ժամանակուան, Յեցիլիոս Իզիդորոս անուամբ, որ ներքին պա-
տերազմների ժամանակ կորցրել էր իւր կալուածոց նշանաւոր մասը,
էլի մահուան ժամանակ թողեց իւր ժառանգներին 4160 ստրուկ:

Չորրորդ դարի վերջին տարիներին, երբ Հարուստների կալուածները շատ փոքրացան և ստրուկների թիւը նուազեցաւ Ս. Յովհաննէս Ոսկեբերանը դառնալով Անտիոքիայի քաղաքացիներին, առանց չափազանցելու կարողանում էր ստրկաց թիւը, որոնք պատկանում էին այն ժամանակուան Հարուստներին, որոշել 1600 կամ 2000 հոգի: Ի՞նչ վիճակ էր երեք դար նրանից առաջ: Հասարակապետութեան վերջին ժամանակ Հռովմայեցի Հարուստ Մարկոս Կրասսոսը սովորաբար ասում էր. «Հարուստի անուն չէ կարող կրել նա, ով իւր Հաշուով չէ կարող պաՀել ամբողջ զօրաբանակ: Յիրաւի նորա ժամանակի Հարուստները ստրուկների ամբողջ բանակներ ունէին: Ազատած գերի Դիմիտրիոս—Պոմպէյանոսին ամեն օր, ըստ վկայութեան Սենեքայի, առաւօտը զեկուցանում էին նորա ստրուկների աւելանալու կամ պակասելու մասին, ինչպէս զօրավարին զեկուցանում են զօրաբանակի առողջապահական վիճակի մասին: Սենեքայի խօսքերը Հաստատուում են Պետրոնիոսի կատակերգութեամբն, որոյ հերոսը — Տրիմալցիոնն առաւօտը ստանում է զեկուցումն իւր ստրուկների բանակի նախընթաց օրուան վիճակի մասին, այս զեկուցումից երևում է, որ նորա կալուածքներում նախընթաց օրը ծնուել են «երեսուն տղայ» և «քառասուն աղջիկ»:

Կարելի է երեւակայել Հռովմայեցի Հարուստների պալատների ներքին կարգն ու դրութիւնը. նոքա շատ ընդարձակ էին. բայց նոքա նեղ էին գալիս ստրուկների բազմութեան պատճառով և այս բազմութիւնը չէր կարող մնալ առանց արդիւնաբերութեան:

Հարուստների պահանջների և սնափառութեան Համար կարևոր էին որոշեալ թէև բաւական մեծ թուով ստրուկներ. իսկ նոցա մնացեալ մասը պարապում էր զանազան աշխատանքներով: Հռովմայեցի Հարուստի տան Համար ոչինչ դրամով չէր գնուում, ինչ որ գործ էին դնում տէրն և նորա ստրուկները, պատրաստում էին իրանք վերջինները:

Ստրուկներն աղում էին ցորէնն և ալիւրից Հաց թխում, միւսները պատրաստում էին զգետներ, ստրուկների մի մասը մանում էր բուրդ և վուշ, միւս մասը գործում էր, ներկում էր անկուածներ, այլք ձևում կարում և ասղնեգործում էին:

Ստրուկների այս մեծ բազմութիւնը զբաղուած էր աշխատանքներով գլխաւոր արուեստաւորների հսկողութեան ներքոյ: Բացի սրանից Հռովմայեցի մեծատան պալատում կային առանձին շրերի բիծ կամ կեղտ հանողներ, մահուդի թափիչ ու տոփիչներ, կօշկակարներ, որսորդներ, ձկնորսներ, նկարիչներ, ձուլիչներ, միւսիոնանրկարներ, ապակեգործներ, հիւաններ, ատաղձագործներ, ոսկերիչներ, ճարտարապետներ, բժիշկներ—և այս ամենքն էլ ստրուկներ էին:

Մեծատան քաղաքային բնակարանում գտանուող ստրուկ արհեստաւորների թիւն այնքան մեծ էր, որ նոցա մի մասն ուղարկուում էր տիրոջ զանազան կալուածներն աշխատանքի համար: Ստրուկների այս բանակը բաժանուում էր դասեր կամ դեկուրիաներ (տասնեակ) ըստ իւրեանց պարապման և ունէր իւր մի քանի դասապետները կամ դիկուրիոնները (տասնապետ):

Ահա Հռովմայեցի մեծատան խօսակցութեան մի օրինակը: Մեր առաջն է նոյն Տրիմալցիոնը, որ հանդիպելով իւր ստրուկներից մէկին հարցնում է. «Դու քանիերորդ դիկուրիայից (դաս) ես»: Քառասներորդից — է պատասխանը: «Գնա՞ծ ես, թէ իմ տանը ծնած»: Ոչ մէկն եմ և ոչ միւսն, ես կտակաւ ձեզ աւանդած եմ: «Լաւ, ես քեզ տեղափոխում եմ ագարակում ծառայող ստրուկների դասը»: Թէ այս խօսակցութիւնը Պետրոնիոսի մտացածին գործ չէ, դորա մասին վկայում են արձանագրութիւնք Հռովմէական գերեզմանաքարերի վերայ. Լիվիայի ստրկաց աղաւնետանը կարդում ենք. *mentor decurio, Jector decurio, decurio femina* և այլն: Հռովմայեցի մեծատունը պարծենում էր նրանով, որ ինքն կարիք չունի մի բան դրամով գնելու: Տրիմալցիոնի մօտ ճաշի ժամանակ հիւրերից մէկը կամենալով տանտիրոջ հաճոյանալ խօսք է բաց անում նորա հարստութեան մասին: «Նա ոչինչ չէ գնում, ասում է նա կեղծ զարմանքով, ինչ որ ուտում ենք, բոլորը նորա կալուածոց բերք են»: Եւ Տրիմալցիոնն, իւր ձեռքով բաշխելով հիւրերին գինի, հպարտութեամբ ասում է. «Գոհութիւն աստուածներին, բոլորն, որոց համար ձեր թուքն է վաղում, առանց փողի է»:

Այսպէս հին աշխարհում ստրկութիւնն աւելի և աւելի սահմանափակեց ազատ աշխատանքի ասպարէզը: Ով որ ունէր փոքր

ի շատէ կարողութիւն աշխատում էր ստրուկներ ձեռք բերել, ով ունէր ստրուկներ, աշխատում էր նոցա աշխատանքով ապրել, առանց վաճառանոցում բան գնելու: Այս հերիք չէ: Ստրկական արժան աշխատութեան գոյութիւնը անհնարին արաւ ազատաշխատաւորների գոյութիւնն:—

Ստրուկների շատութեան, նոցա պահպանութեան արժանութեան և նոցա ձրի աշխատանքի պատճառով, մեծամեծաց տներում ստրուկների աշխատանքով արտադրած իրերի քանակութիւնն միշտ աւելի էր տիրոջ պահանջից, ուստի և մեծ քանակութիւն զանազան արտադրութեանց ծախուում էր շատ արժան գնով: Բայց մի քանի մեծամեծաց տներում վաճառականութիւնը տանտիրոջ համար անպատիւ գործ էր համարուում, ուստի և մեծ պաշար թէ երկրագործական և թէ գործարանական արտադրութեանց պահպանում էին տիրոջ ամբարանոցներում և արկղներում: Սրանով յայտնի բան է առուտուրը մնաս էր կրում: Ահա այն ժամանակուան կարգը ցոյց տուող մի օրինակ: Հասարակապետութեան վերջին ժամանակում մի պրետոր, որ պարտաւոր էր ժողովրդի համար ներկայացումն տալ, պէտք է հարկւր երեւակների (դէրասան) միակերպ շտրեր հագցնէր: Պրետորը չգնաց վաճառականների մօտ կարեւոր ճոթը գնելու, չգնաց դերձակների մօտ խնդրելու, որ իւր ապսպարանքը մի օրում կատարեն: Նա գնաց Հռովմի առաջնակարգ հարուստներից մէկի՝ Լուկուլլոսի մօտ և խնդրեց նրան, որ դերասանական խմբին շոր տայ: Լուկուլլոսն իսկոյն խմբի կառավարչին ուղարկեց հինգ հազար ծիրանի քղամիդ, բայց այսքան զգեստը կազմում էին հարստի ունեցած պաշարի աննշան մասը:

Հռովմում շատ կային այնպիսի հարուստներ, որոնք կարող էին դերասանների ամբողջ խումբ հագցնել կամ կազմել հոյակապ թագման հանդէս:

Մարցիալոսն իւր ժամանակի մի հարստի մասին ասում է, որ նա այնպիսի մեծ պաշար բազմազան և թանգագին շորերի ունէր, որ եթէ կամենար կարող էր ամբողջ տրիբի շոր հագցնել (գունդ հազար հոգու):

Շատ Հռովմայեցիք պահում էին ամբողջ գործարաններ, ուր աշ-

խատում էին միայն ստրուկները: Սուրբառնիոսն մի ուսումնականի մասին ասում է, որ դպրոցի հետ, որ պահում էր, ունէր շորերի գործարան: Հին դարերում այնպիսի բաժանումն աշխատութեանց կամ արհեստից չկար, ինչպէս այժմ: Հռովմայեցին կարող էր զինուոր լինել և մի և նոյն ժամանակ լինել և իրաւաբան, քաղաքական պաշտօնեայ, փիլիսոփայ (իւր փիլիսոփայութիւնն ուսուցանող) բանաստեղծ և երկրագործ: Մենք տեսանք, որ հարուստների տներում կենդրոնացած էին բազմաթիւ արհեստների արտադրութիւնք:

Այն ժամանակուան օրէնքներն և իրաւաբանական արձանագրութիւնք տարբերութիւն չեն դնում ծառայող, ստրուկների և արհեստաւոր ստրուկների մէջ: Հարստի տանը ստրուկներն արտադրում էին կարեւորն ոչ միայն իւրեանց տիրոջ պահանջը լցուցանելու համար, այլ և նորա բարեկամների, նորա հովանաւորութեան ներքոյ գտանուողների ու այլ ստրուկների համար, մի խօսքով ամենքի համար, quos circa se habet (որոնք նրան շրջապատում են): Այսպէս իւրաքանչիւր մեծատան բնակարանը կարելի էր համարել միացումն մի քանի գործարանների, որոնք աշխատում էին տիրոջ և նորա ծառայութեան համար, մինչև անգամ նորան շրջապատող հացկատակ դատարկապորտների համար, որոնք նրան իրանց հովանաւոր համարում էին: Սորա հետեւանքն այն էր, որ հին աշխարհում ոչ միայն ազատ աշխատանքն հնարաւոր չէր, այլ և ազատ ճարտիչ այն համոզման էին հասնում, որ աւելի յօրինար է ոչինչ զանել և ապրել որքիչ հաշւով:

Իսկ եթէ ազատ մարդկերանցից մէկը կամենար ապրել իւր աշխատանքով, և ձեռնամուխ կլինէր բանալու մի գործարան կամ վաճառատուն, իւր աշխատանքի հետ միացնում էր նաեւ ստրուկների աշխատանքն, որով գործարանի վաստակը շատ աւելի էր լինում: Ստրուկը շատ արժան էր: Մշակ — ստրուկն արժէր 120 ից մինչև 150 ուռբլի, իսկ կին ստրուկը 35—50 ուռբլի մեր դրամով: Մշակ ստրուկներին կերակրում էին շատ պարզ կերակրով, Կատոնը խորհուրդ է տալիս կերակրել նրանց ձիթապտուղով, բայց ոչ ծառից քաղած հասած պտուղներով, այլ գետին թափուածներով — ալիւրից, ձէթից ու աղից պատրաստած ապուրով, տալ սակաւ ինչ գինի, երբե-

մէն միայն լուբիա, բայց երբէք չտալ կակուղ կերակուր, ստրկի այսպիսի ապրուստը չէր նստում տարեկան 25 կամ 35 ռուբլիից աւելի: Տէրն օգուտ էր քաղում իւր ստրուկների աշխատանքից առանց մեծ ուշադրութիւն դարձնելու նոցա մարմնաւոր առողջութեան վերայ: Ստրուկներին ուժասպառ էին անում աշխատանքով, վաստակեցնելով օր ու գիշեր և կարճ միջոց էին տալիս հանգստեան:

Իւրաքանչիւր տէր ուզում էր ոչ միայն շուտով վերադարձնել ըստըրկի համար վճարուած գումարը, այլ և կրկնապատիկ տոկոսը ստանալ այն գումարից, որ գործ էր դրել գործարանը շինելու համար: Կամ ինքը տէրը խարազանը ձեռին կանգնած էր մշակների գլխին և կամ կառավարիչ նշանակած ունէր մի ազատ մարդու, վէրքն անպակաս էր ստրկի կոճակից: Ինչպէս Հարաւային Ամերիկայի ստրկատէրը, նոյնպէս և Հոովմայեցի տէրերն օրինաց ամբողջ գիրք և շատ հաստատութիւնք ունէին կազմած ստիպողական աշխատութեան իրանց տմարդի կարգը պաշտպանելու համար: Հէնց որ ստրուկը փախէր, նորա ետեւից կընկնէին մարդորանները (*fugitiviarii*): Ստրկի փախուստն օրէնքը եղեռնագործութիւն էր համարում: Պլաւտոսը ծաղրական նկատողութիւն է անում, թէ պառոնից փախած ստրուկը իսկապէս գող է, որովհետեւ նա համարձակել է ինքն իրան գողանալ տիրոջից—*sui furtum facere*:

Փախստականի բաժինն էին ամենատմարդի պատիժները, այն է՝ շղթայ, մտրակ, բանտ,—աշխատանք հանքերում և կնիք երեսին կարմրացրած երկաթով: Հոովմայ գործարանների դրան տիրոջ հրամանը կատարելու համար միշտ պատրաստ կանգնած էր դահիճը կարմրացրած երկաթը ձեռին: Միայն Կոստանդիանոս Մեծի ժամանակ վերջին բարբարոսական պատիժն արգելուեցաւ:

Այսպիսի միջոցներով առաջն առած էին այն վտանգների, որոնք սպառնում են մեր ժամանակի գործարաններին և արհեստանոցներին. որպիսի են բանուորների խօսք կապելը: Հին գործարանները նման էին բանտերի, լաւ կազմակերպուած ստիպողական աշխատանքով, ուր զարմանալի վաստակներ (շահ) ձեռք էին բերում բանուորների քրտինքով և արիւնով: Պարզ է, որ այսպիսի գործարանները դէմ ոչ մի կերպով ազատ աշխատանքն ակոյեան — մտնող չէ

կարող լինել: Ուստի և չորրորդ դարի յիշատակարանների արձանագրութիւնքն, որոնք խօսում են ազատ արհեստաւորների վերայ, պէտք է հասկանալ այնպէս, որ այս արհեստաւորներն էին կամ ազատութիւն ստացածներ և կամ ազատ ծնած արհեստաւորներ, որոնք կառավարում էին հարուստների ստրկաց արհեստանոցները: Ստրկի մէջ ամեն ինչ մարդկային այնպէս ոչնչացրած էր, որ ստրկին անձն չէին համարում այլ լոկ գործարանի աշխատող ոյժ, որպիսի գործիքնակ մենք համարում ենք գոլորշին:

(Շարունակել)

ԽՈՐԵՆՇՈՒ ՊԸՏՄՈՒԹԵԱՆ

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ

Ա.

Պատմութեան բնագրի Թարգմանութեան ենթարկուիլ, — կունդ Արամազդ. — սեաւ կէտադրութիւն. — քերականական սխալներ:

Խորենացու պատմութեան գիրքը մեր ամբողջ գրականութեան մէջ բացառիկ և արտօնեալ տեղ ունի գրաւած: Հայկական միտքը երբեք չէ արտայայտուել այնպիսի կորովութեամբ և այնպիսի վայելուչ արուեստով, ինչպէս այդ եղել է պատմահօր գլուխ — գործոցում: Աւստի հայկական մտքի և ոչ մի արտայայտութիւն չէ գրաւել լուսաւորեալ աշխարհի լուրջ ուշադրութիւնը այն չափով, ինչ չափով այդ բանին արժանացել է Խորենացին: Բազմաթիւ Թարգմանութիւններ զանազան լեզուներով, քննադատութիւններ, դեր և դէմ կարծիքներ, անթիւ ծանօթութիւններ, ուսումնասիրութիւններ և ենթադրութիւններ իրենց նիւթ են ունեցել Խորենացու ամբողջ երկասիրութիւնը, կամ նորա այս կամ այն հատուածը:

Ե. յսուամենայնիւ, մեր կարծիքով, Խորենացու ուսումնասիրութեան գործը ոչ միայն դեռ վերջացած չէ, այլ, համարձակութիւն չլինի ասել, դեռ նոր է սկսում: Իւրովսանն օգնել այդ մեծ գործին, թէև նուազ և աննշան չափով, ամեն մի գրագիտի բաղձալի է և, կարծեմ ներքի ցանկութիւն: Ե. յ. ցանկութիւնն ես էլ ունեցայ և ահա, այժմ, մի շարք միմիանցից անկախ, ինքնուրոյն յօդուածներով կամենում եմ հաղորդել մեր հին մատենագրութեամբ հետաքրքրուող ընթերցողներին իմ՝ մօտ մի տարուայ ուսումնասիրութեանց արդիւնքը: